

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների և բողոքների, ինչպես նաև աշխատակազմի և մարմնի ղեկավարի կողմից կատարած քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

1. 2017 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում քաղաքացիներից ստացվել է թվով 23 առաջարկություն, դիմում և բողոք, որից 6-ը վերահասցեագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից.

Դիմումներն ըստ բնույթի	Ընդամենը	Պատասխանվել է	որից			Ծանոթություն
			Տրվել է դրական լուծում	Մերժվել է	Տրվել է պարզաբանում	
Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղեն որոշ մշակաբույսերի տեղական սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրում ընդգրկելու մասին	6	6	6			
Անտառային տարածք վարձակալության տրամադրելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի «Պետական անտառները և անտառային հողերն օգտագործման տալու կարգը սահմանելու մասին» N806-Ն որոշման 25-րդ կետի համաձայն անտառների և ան-

						<p>տառային հողերի վարձակալության իրավունքը տրամադրվում է մրցույթի միջոցով, որի մասին ծանուցվում է <a href="http://www.azdarar.am">www.azdarar.am</a> և լիազորված մարմնի <a href="http://www.minagro.am">www.minagro.am</a> պաշտոնական ինտերնետային կայքերում:</p> <p>Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից սահմանված կարգի համաձայն՝ մրցույթ անցկացնելու համար անհրաժեշտ է, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-Ը նախարարություն ներկայացնի մրցույթ հրապարակելու վերաբերյալ առաջարկություն՝ կցելով վարձակալությանը տրամադրվող տարածքի վերաբերյալ հողամասի հատակագծի և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի պատճենները:</p>
Մեղվաթույնի արտադրության կազմակերպման մասին	1	1			1	<p>1 դիմումատուի պարզաբանվել է, որ մեղվափեթակներ ձեռք բերելու և մեղվաթույնի արտադրությանը զբաղվելու նպատակով նա կարող է օգտվել ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 39 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման</p>

					<p>ծրագրից: Վերջինիս իրականացվում է 2017 թվականի երրորդ եռամսյակից և շարունակվելու է մինչև 2021 թվականը: Նշված ծրագրով վարկերը տրամադրվում են 3-10 մլն ՀՀ դրամ գումարի սահմաններում մինչև 5 տարի մարման ժամկետով՝ ելնելով գործունեության կոնկրետ ծրագրով նախատեսված ներդրումների բնույթից: Վարկերը տնտեսավարողներին տրամադրվում են 5% տոկոսադրույքով, իսկ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերին և գյուղատնտեսական կոոպերատիվներին՝ 3% տոկոսադրույքով: Սուբսիդավորվող վարկերի տրամադրման համար հայտի ընդունման, քննարկման և վարկի տրամադրման նախապայման է սահմանված Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից ուսուցման արդյունքում տնտեսավարողներին տրամադրված հավաստագիրը, որը հիմք է հանդիսանում ֆինանսական կառույցներից վարկ ստանալու համար: Ներկայումս ծրագրի շրջանակներում վարկեր են տրամադրում «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» և «Տարմ Կրեդիտ Արմենիա», «Կամուրջ», «Քարդ Ագրո Կրե-</p>
--	--	--	--	--	--

						<p>դիտ» ունիվերսալ վարկային կազմակերպությունները:</p> <p>Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվում է միայն նպատակային ծրագրեր իրականացնելու համար, ուստի ֆինանսական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ նրա խնդրանքը հնարավոր չէ բավարարել:</p>
Դրամական միջոցների վրա դրված արգելանքը հանելու նպատակով ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան միջնորդություն ներկայացնելու մասին	1	1	1			
Պտղատու ծառատեսակների տնկիներ հատկացնելու մասին	1	1			1	<p>1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից նույն հասցեում բնակվող նրա որդուն 2017թվականի նոյեմբերի 27-ին տրամադրվել է պտղատու ծառերի տնկիներ, որի համար վերաբերյալ նա ներկայացրել է ստացական:</p> <p>Կրկին անգամ տեղեկացվել է դիմումատուին, որ հանրապետությունում տնկանյութի արտադրությունն ու իրացումն իրակա-</p>

						նացվում է մասնավոր տնտեսավարողների կողմից և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տնկանյութի պաշարների չի տնօրինում:
Ոռոգման ջրի անբավարար մատակարարման պատճառով կարտոֆիլի բերքի կորստի մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ ոռոգման ջրի անբավարար մատակարարման պատճառով կարտոֆիլի բերքի կորստի վերաբերյալ նրա դիմումը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N ԻԱ-ՌՆ-1/11572-17 գրությամբ վերահասցեագրվել է ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե:
Վարկերի մարման ժամկետների երկարաձգման գործում օժանդակություն ցուցաբերելու մասին	2	2	1		1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը գրությամբ դիմել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին, «ԱՐԵԳԱԿ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին և «ԿԱՄՈՒՐՋ » ՈՒՎԿ ՓԲԸ-ին վարկերի մարման ժամկետների երկարաձգման հարցում օժանդակություն ցուցաբերելու խնդրանքով: Պատասխանը ստանալուց հետո դիմումատուին լրացուցիչ կտեղեկացվի:
ՀՀ պատվավոր կոչումներ շնորհելու համար միջնորդելու մասին	1	1			1	1 դիմումատուի տեղեկացվել է, որ ՀՀ Նախագահին ուղղված նրա դիմումը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության

						նախարարությունում ընդունվել է ի գիտություն և պարզևատրման հնարավոր գործընթացներ իրականացնելու դեպքում այն կքննարկվի:
ԳԶՄ-ի կողմից անցկացված բաց մրցույթի արդյունքները վերանայելու, աշխատանքում վերականգնելու մասին	3	3	2		1	1 դիմումատու հրավիրվել է ՀՀ գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ, վերջինիս հետ քննարկվել են դիմումում բարձրացված հարցերը և տրվել են համապատասխան պարզաբանումներ:
Ընդամենը	23	20	11		9	3 դիմում ընթացքի մեջ է:
Որից՝ ՀՀ կառավարության աշխատակազմից վերահասցեագրված						
Մթերված խաղողի, լոլիկի դիմաց գումարները վճարելու գործում օժանդակելու մասին	2	2	1		1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ նրա կողմից ՀՀ վարչապետին ուղղված դիմումը «Վինար» ՍՊԸ-ի տնօրենի մասնակցությամբ քննարկվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում 2015 թվականին ընկերության կողմից մթերված խաղողի դիմաց գյուղացիական տնտեսությունների, այդ թվում դիմումատուի նկատմամբ առկա պարտավորությունների կատարման ընթացքն արագացնելու և ավարտին հասցնելու հարցը: Ընկերության տնօրենը հավաստիացրել է, որ դիմումատուից

					<p>մթերված խաղողի արժեքն ամբողջությամբ կվճարվի ֆինանսական միջոցների առաջին իսկ մուտքերի դեպքում:</p> <p>Քննարկման արդյունքում որոշվեց ճշտել ընկերության կողմից 2015 թվականին մթերված խաղողի դիմաց գյուղացիական տնտեսությունների նկատմամբ առկա պարտավորությունները: Այդ նպատակով 2017 թվականի դեկտեմբերի 15-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչը և ընկերության տնօրենը մեկնել են ՀՀ Արարատի մարզի Շահումյան, Քաղցրաշեն, Այգեպատ և Այգեզարդ համայնքներ: Այցելության ընթացքում նշված համայնքների, ինչպես նաև մարզի մյուս համայնքների ղեկավարների և գյուղացիական տնտեսությունների հետ ճշգրտվել են ընկերության առկա պարտավորությունների չափերը, ըստ որի ընկերության կողմից 2015 թվականին մթերված խաղողի դիմաց գյուղացիական տնտեսությունների նկատմամբ առկա պարտավորությունները 2017 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ կազմել են շուրջ 33,8 մլն դրամ:</p>
Ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու գոր-	1				1 դիմում ընթացքի մեջ է:

ծում օժանդակություն ցուցաբերելու մասին						
Գիտատեխնիկական նորույթը /մեքենա/ գյուղատնտեսական աշխատանքներում օգտագործելու նպատակահարմարության մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ համաձայն նրա հետ ձեռք բերված պայմանավորվածության՝ 2018թվականի հունվար ամսին համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կկազմակերպվի գիտատեխնիկական նորույթի՝ մեքենայի ներդրման նպատակահարմարության հարցի քննարկում: Վերջինիս անցկացման վայրի և ժամկետի մասին դիմումատուին լրացուցիչ կտեղեկացվի:
Վարձակալության հանձնված անտառային տարածքներում իրականացվելիք բիզնես-ծրագրերի մրցութային հանձնաժողովի կողմից քննարկման գործընթացը կանոնակարգելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Տոհմային երինջների ձեռքբերման պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման նոր ժամանակացույց կազմելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Ընդամենը	6	3	1		2	3 դիմում ընթացքի մեջ է: